

Ձեր Ինֆորմացիան Գաղտնի է

Ի՞նչ է սպասվում ձեր մասին տրված ինֆորմացիային մինչ դուք օգտվում եք այս ծառայությունից:

Ովքե՞ր ենք մենք: և

Մենք ձեր տարածքաշրջանում գործող առողջապահական և հոգաբարձական տարբեր ծառայություններից մեկն ենք, բոլորս միասին աշխատելով համագործակցված բավարարում ենք ձեր առողջապահական կարիքները:

Ի՞նչ ինֆորմացիա ենք հավաքում ձեր մասին:

Մենք գրանցում ենք ձեր անունն ու ձեզ հետ կապվելու տվյալները: Այլ տվյալներ՝ ինչպիսիք են խնամքի պլանավորում և առողջության հետ կապված տվյալներ, գրանցվում են յուրաքանչյուր այցելության ժամանակ:

Ինչու՞ ենք հավաքում ձեր մասին ինֆորմացիա:

Ինֆորմացիան, որ մենք հավաքում ենք օգնում է մեզ պահել ժամանակի պահանջների համապատասխան տվյալներ ձեր կարիքների մասին այնպես, որ կարողանանք հնարավորության սահմաններում լավագույն ձևով խնամել ձեզ: Մենք ինֆորմացիան օգտագործում ենք նաև ավելի լավ ղեկավարելու և պլանավորելու այս ծառայությունը:

Ուրիշ էլ ովքե՞ր են տեսնելու ձեր ինֆորմացիան:

Ձեր ինֆորմացիան կարող են տեսնել միայն այն մասնագետները ովքեր ընդգրկված են այս ծառայության մեջ և համարվում են ձեր հոգաբարձուները: Այլապես, ձեր մասին

Ունե՞ք հարցեր:

Եթե ունեք հարցեր կամ բողոք կապված ձեր ինֆորմացիայի հետ, կամ ցանկանում եք ուսումնասիրել ձեր մասին գրանցված տվյալները, կարող եք դիմել մեր աշխատակիցներից որևէ մեկին մինչ դուք օգտվում եք մեր ծառայությունից:

ինֆորմացիան մենք կբացահայտենք միայն այն դեպքում, եթե դուք դրա իրավունքը մեզ տաք կամ ըստ օրենքի՝ ինչպես օրինակ բժշկական շտապ օգնության դեպքում:

Ի՞նչ ասելիք ունեք ձեր ինֆորմացիայի հետ կապված:

Դուք եք որոշողը, թե ինչ է լինելու ձեր տված ինֆորմացիայի հետ: Մենք հիմնվումք ենք մեզ տրամադրված ձեր մասին ինֆորմացիայի վրա, որպեսզի ցուցաբերենք ճիշտ խնամք ձեր նկատմամբ: Եթե դուք որոշեք չբացահայտել կամ մերժեք ձեր մասին ինֆորմացիայի հայթաթումը, դա ձեր իրավունքն է, սակայն դա կարող է ազդել մեր հնարավորությունների վրա ձեզ մատուցելու հնարավոր լավագույն ծառայություն:

Ինչպե՞ս է ձեր ինֆորմացիան պահպանվելու:

Մենք կոչված ենք պահպանելու ձեր գրանցված տվյալները: Ձեր ինֆորմացիայի գաղտնիությունը նույնպես պահպանվում է օրենքով: Մենք ձեր ինֆորմացիան պահպանում ենք խիստ գաղտնի և ապահով:

Կարո՞ղ եք արդյոք ստուգել ձեր ինֆորմացիան:

Այո: Դուք իրավունք ունեք ստուգել ձեր ինֆորմացիան և խնդրել որ ճշտվի այն, եթե անրաժեշտ է: